

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔ

«ԳՐԱՎԱՏՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՎԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 3-ի ՀՕ-43-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում՝

1) երրորդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«- գրավատուն՝ գրավատների կազմակերպման լիցենզիա (այսուհետ՝ լիցենզիա) ստացած իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր (այսուհետ՝ կազմակերպություն)».

2) վեցերորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածում «իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ կազմակերպություն)» բառերը փոխարինել «կազմակերպությունները» բառով:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«1. Արգելվում է լիցենզիա չունեցող անձանց կողմից «գրավատուն» բառի, դրա հոլովված ձևերի, օտար լեզվով այդ բառի հայերեն տառադարձությունների, թարգմանությունների կամ դրանց զուգորդությունների օգտագործումն իրենց անվան մեջ, գովազդներում, հրապարակային օֆերտայում կամ որևէ կերպ աջակցելը գովազդելուն, եթե դրանց օգտագործման իմաստից չի բխում, որ խոսքը չի վերաբերում սույն օրենքով սահմանված գրավատնային գործունեությանը, և եթե նման օգտագործման իրավունքը չի վերապահվել օրենքով կամ միջազգային պայմանագրով:»:

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածի 3-5-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) «ա» կետում «լիցենզիայում» բառը փոխարինել «լիցենզիայի ներդիրում» բառերով.

2) «բ» կետում «15 օրվա» բառերը փոխարինել «տասն աշխատանքային օրվա» բառերով:

Հոդված 6. Օրենքի 13-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 13. Գրավատնային գործունեության լիցենզավորումը

1. Գրավատնային գործունեության լիցենզավորման կարգը և պայմանները սահմանվում են բացառապես «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման,

վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրա հիման վրա ընդունված լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով: Այլ օրենքներով լիցենզավորման վերաբերյալ այլ դրույթներ սահմանված լինելու դեպքում գրավատների համար գործում են «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները:»:

Հոդված 7. Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասում ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ստուգումներ և հեռակա վերահսկողություն իրականացնելու միջոցով» բառերը փոխարինել ««Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով» բառերով:

Հոդված 8. Օրենքի 16-րդ հոդվածի «դ» կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«դ) լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում:»:

Հոդված 9. Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 10. Օրենքի 20-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 20. Լիցենզիայի ուժը կորցրած ճանաչումը

1. Լիազոր մարմինը, որպես պատասխանատվության միջոց, կարող է լիցենզիայի ուժը կորցրած ճանաչել (ամբողջությամբ կամ որոշակի գործունեության վարի մասով), եթե՝
ա) լիցենզիա (լրացուցիչ թույլտվություն) ստանալուց հետո 12 ամիս անընդմեջ գրավատունը գրավատնային գործունեություն չի իրականացրել (համապատասխան վայրում).

բ) գրավատունը հրապարակել կամ լիազոր մարմին է ներկայացրել (այդ թվում՝ լիցենզավորման գործընթացում) ապակողմնորոշիչ, ոչ արժանահավատ տեղեկատվություն կամ կեղծ փաստաթղթեր..

գ) գրավատունը սույն օրենքի 18-րդ հոդվածին համապատասխան տուգանք կիրառելուց հետո՝ երկու տարվա ընթացքում, երրորդ անգամ թույլ է տվել տուգանքի կիրառման համար հիմք հանդիսացող խախտում.

դ) գրավատունը սույն օրենքի 19-րդ հոդվածին համապատասխան լիցենզիայի գործողության կասեցման համար հիմք հանդիսացող խախտում թույլ տալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, թույլ է տվել խախտում, որը հիմք է լիցենզիայի գործողությունը կրկին կասեցնելու համար.

ե) գրավատունը սույն օրենքի, գրավատնային գործունեությունը կարգավորող այլ օրենքների, դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի կամ իր ներքին իրավական ակտերի (այդ թվում՝ վարկավորման ընդհանուր պայմանների) պահանջների պարբերական (երկու և ավելի) կամ չարամիտ խախտումներ է կատարել.

զ) գրավատունը լիցենզիայի գործողության կասեցման ժամկետում կասեցման պահանջների խախտմամբ գրավատնային գործունեություն կամ դրա առանձին գործառույթ կամ լիցենզիայով վերապահված առանձին գործողություն է իրականացրել.

է) գրավատունը չի իրականացրել կամ ոչ պատշաճ է իրականացրել լիազոր մարմնի՝ օրենքով սահմանված կարգով տրված հանձնարարականը.

ը) խախտվել են հաշվապահական հաշվառում վարելու կանոնները կամ ֆինանսական կամ այլ հաշվետվությունների ներկայացման կամ հրապարակման կարգը կամ պայմանները
թ) օրենքով նախատեսված այլ դեպքերում:»:

Հոդված 11. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո: